



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՓ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 05.07.2014թ. ՆԻՍՏԻ ԹԻՎ 5 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՈՐՈՇՈՒՄ 12

ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղական համայնքի ավագանու քննարկմանը դրվեց համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի 0.02718 հա արոտավայրը, 0.11754 հա այլ հողատեսքը եներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու հարցը:

Համայնքի ավագանին որոշում է

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.06.2014թ. „Էլեկտրամատակարարման հուսալիություն „ վարկային ծրագրի շրջանակներում „ Հրազդան ՋԷԿ-ը –Շինուհայր ենթակայանին միացնող 220 Կվ էլեկտրահաղորդման օղային գծի վերակառուցման մասին,, թիվ 599-Ն որոշման պահանջները , ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.02718 հա արոտավայրը, 0.11754 հա այլ հողատեսքը փոխադրել եներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա էլեկտրահաղորդման օղային գծի 7 հենասյուն կառուցելու համար:
2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ.ՄԻՄՈՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս.ԵՓՐԵՍՅԱՆ

